

Ի. Արուստյան

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՎՐԱՑԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Հեղվարանություն մեջ վաղուց է նկատված, որ հայերենի և վրացերենի մեջ (իբր աղգակից լեզուների հետ) գտնվում են բավական մեծ քանակությամբ բառարանային հանդիպումներ: Դրանց վրա առանձին ուշադրություն էին դարձնում ոչ միայն լեզվաբանները, այլև բանասերները: Հեղվարանների նպատակն էր, գլխավորապես, հետազոտել այդ հանդիպումների աղբյուրը, իսկ բանասերների նպատակը՝ պարզել այդպիսի բառեր պարունակող հայկական և վրացական բնագրերի հարաբերությունը, հատկապես՝ որը որից է կախված, այսինքն՝ մեկը մյուսից է թարգմանված, թե՛ երկուսն էլ մի երրորդ աղբյուրից են բխում:

Բանասիրական պարապմունքների ընթացքում հաճախ մեզ էլ պատահում են բառական այնպիսի հանդիպումներ, որոնք ուրիշների կողմից դեռ չեն նկատված: Կարծում ենք, հայերեն ուսումնասիրողների համար ավելորդ չի լինի, եթե այստեղ կանգ առնենք, թեկուզ համառոտակի, մի քանի հանդիպումների վրա:

1. յօճօճ-ո = *կոծախ

Այն հուշարձանը, որի մեջ մենք այս բառը նկատել ենք հայերեն բառարանային հանդիպումով ներկայացված, վրաց գրականության մեջ «Ճօճօճօ լծոցոցձ» (սամաթա ցխովրեբա) է կոչվում, իսկ հայ գրականության մեջ «Հարանց վարք» անունն է կրում: Վրացերենում, ինչպես մենք պարզել ենք մեր մի աշխատության մեջ,¹ գոյություն ունի այդ երկի մի քանի (չորս) խմբագրություն, որոնցից ամենալրիվը և մեզ համար մատչելին ըստ նյութի համարյա թե համընկնում է «Հարանց վարք»-ի առաջին հայերեն տպագրության հետ (1641 թ.), որը, ըստ երևույթի, առանց փոփոխության է կրկնում նման գրչագիր օրինակը: Հիշյալ վրացերեն խմբագրությունը, մյուսների հետ համեմատած, ուշ ժամանակների գործ է՝ XI դ. վերջերին հունարենից թարգմանված է Աթոսում գործող Թեոփիլե քահանա-կրոնավորի ձեռքով, իսկ հայերեն խմբագրությունը, նրա վերահրատարակչի կարծիքով, գանազան ժամանակների և գանազան լեզուներից բխած թարգմանությունների ժողովածու է:

«Հարանց վարք»-ի այն պատմածը, որը մեզ հետաքրքրող բառն է

¹ Ի. Ի. Արուստյան, Վրացերենի հեռերը հին հայերեն գրականության մի հուշարձանում. Հայկական «Հարանց վարք»-ի աղբյուրի հարցի մասին (վրացերեն). «Գրական համալուրդ», № 9 29—38. Վրաստանի Գիտությունների Ակադեմիայի հրատարակ., Թբիլիսի, 1945:

պարունակում, հետևյալ կերպով է ներկայացված վրացերեն և հայերեն խմբագրութիւններում՝

«Ասաց հայրն Ռովսէս. Կրօնաւոր
որ փախիցէ ի մարդկանէ, նսան է
հասուն խաղողոյ իսկ որ ընդ
մարդիկ խառնեալ իցէ, է նա իրրև
զկոխածն (վաթեալ ի յաղբիս—
1641 թ. տպագր.)».

[տ. 1855 թ. տպագր.:
Վենետիկ, 505, ք. հատ.]

«Յոյշա մամման Յ ուց: յաւո, Բո-
նոյո ուոյոյոյոն մայոյոյոն. մեցաց
արն ոցո պրոմցնա մփոցցնա, Բոլո
Բոմցոյո յաւոյո տանա Բոլոլոլ ուոյո,
մեցաց արն ոցո յաւոյոնա շնոլոլոնա.»

[Գրչագ. Ա. — № 1105. 73 v.]

Համեմատութիւնը, ինչպես տեսնում ենք, շատ հաջող է, ղեղարկես-
տական, ինչ որ «Հարանց վարքեր»-ի բնորոշ կողմն է ներկայացնում: Մի
ղեպքում, որոշ երևույթ նմանեցված է մփոցց պրոմցնոյ-ին («հասուն խա-
ղողոյ»), իսկ մյուս ղեպքում՝ շնոլոլոլ յաւոյոն-ին (խակ *կածախի):

Նման համեմատութիւնը խախտված է հայերենում. առաջին ղեպ-
քում այնտեղ էլ «հասուն խաղող» է դրված, իսկ մյուս ղեպքում՝ առաջինի
հետ, որպես զուգակից ձև, «կոխած» է բերված, և այն էլ այնպես, որ ասված
չէ, թե ինչ է կոխված: Սվսրանից երևում է, որ այստեղ կամ ինչ-որ բան պա-
կասում է, կամ էլ կոխածն ինչ-որ բանի աղավաղված ձևն է, որը կապված պի-
տի լինի արտագրողի հետ: Համեմատութիւնը վրացերեն բնագրի հետ՝ պարզ
ցույց է տալիս. որ այստեղ (հայերենում) յաւոյոն-ը պիտի լիներ, բայց *կոծա-
խի ձևով, որը սովորական բառ չլինելով հայերեն գրականութեան մեջ, արտա-
գրողն ընդունել է իբրև սխալ և փոխել է «կոխած»-ով: Հետագայում հաս-
կացել են այս անհարմարութիւնը և, բնագիրն ուղղելու նպատակով,
ավելացրել հետևյալ խոսքը՝ (զկոխածն) «վաթեալ ի յաղբիս»: Այսպիսով,
«Հարանց վարք»-ի վրացերեն բնագրի օգնութեամբ վերականգնվում է հին
հայերենում գործածված մի նոր բառ՝ կոծախ, որը համապատասխան
վրաց բառի հետ՝ յաւոյոն-ը բառարանային հանդիպման օրինակ է ներկա-
յացնում:

յաւոյոն-(ո) վրացերենում շատ վաղուց է գործածված: Նրան հանդիպում
ենք Նույնիսկ Աստվածաշնչի մեջ (Սեսայի 18, նդեկիէլ 18, Առակք
10, 24), որտեղ յաւոյոն նշանակում է բույս. որը ծաղկում է, ունի ողկույղ-
ներ (Սեսայի 18, 2) և միաժամանակ միրգն է, ատամներ հարող (Նդեկիէլ
18, 2 Առակք 10, 24), Համապատասխան տեղերում հայերենի մեջ «աղոխ» է
դրված:

յաւոյոն-(ո) բառի նշանակութիւնը վրացերենում ավելի ցայտուն կեր-
պով «Հարանց վարք»-ի հիշյալ վրացերեն խմբագրութիւնից է երևում:
Ըստ վերոհիշյալ հատվածի՝ նա չհասած մի ինչ-որ միրգ է, որը ձայնաբա-
նական նմանութիւն ունենալով յոյոն-ը (ո) բառի հետ, կարելի է ընդու-
նել, որ նույն նշանակութիւնն ունի, ինչ որ հայերեն կոծախուրը (=ծո-
րենի), որը ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հր. Ամառյանը համարում է վրացե-
րենից փոխառյալ¹:

յաւոյոն-ն հայտնի է և Հր. Ամառյանին, բայց մասամբ, այն է՝ իբրև
«թթու, խակ, չհասած», որի հետևանքով նրան դնելով ճանրեն քրեցախի,

¹ Ի. Ամառյան—Արմատական բառարան, հատ. Բ, էջ 1278.

քաղցախուրի» շարքի մեջ, համարում է նրանց հետ միասին իբրև հայերենից փոխառեալ բառ, կցելով բոլորը հայերեն «քաղցախ» բառի հետ¹։

Վրացերենում վաղուց գործածված յաֆան բառը հետազայում տեղի է տալիս յոֆանյուր-ին, որը միակ տարածված բառն է դարձել ինչպես պրականության, նույնպես էլ բարբառների և ազդակից լեզուների մեջ (յոֆանյուր-ո, յոֆոնյուրո, յեֆոնոն... սվաներեն՝ յոֆնո)։ Այս ձևերը կարծես են տալիս, որ յաֆան-ի կողքին եղել է նաև *յոֆան-ո։

Ինքզինքն ավայություններից հետո, կարծում ենք, կասկածելի չպետք է լինի մոտիկ հարաբերությունը յաֆան (*յոֆան-ո) և յոֆանյուր (յոֆոնյուր-ո) բառերի միջև։ Եթե յաֆան-ո (*յոֆան-ո) ճաներեն «քաղցախի, քաղցախուրի» հետ այնքան սերտ կապ չունի, ինչքան վրաց. յոֆանյուր-ո հետ։ Վերջինս յաֆան (*յոֆան-ո)-ից առաջացած պետք է լինի, չոր մասնիկով։ Սույնպիսի հարաբերություն պետք է տեսնել և ճաներեն «քաղցախի» և «քաղցախուրի» միջև, որոնք վրացերենից են երևում փոխառյալ յաֆան-ո — «քաղցախի. յոֆանյուր-ո — «քաղցախուրի։ Այսպիսով, դուրս է գալիս, որ հայերենը փոխ է առել վրացերենից՝ յաֆան-ո (= *կոծախ) և յոֆանյուր (կոծախուր), ինչպես և սրանց համապատասխան ճաներեն ձևերից՝ քաղցախ-ի։

¹ Նույն, համ. 2, 1431—32։

И. И. Нижа радзе, Русско-сванский словарь, стр. 8.